ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 8-ին Ստրասբուրգում տեղի ունեցավ Եվրախորհրդի կազմակերպած ժողովը՝ նվիրված միջմշակութային երկխոսության շրջանակում կրոնների ունեցած դերին, որին մասնակցեցին շուրջ հարյուր ներկայացուցիչներ եվրոպական երկրներից: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս ժողովին մասնակցեց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը:

Ժողովի ընթացքում քննարկվեցին կրթության սկզբունքներին, նպատակին, պետական կրթական հաստատությունների և կրոնական դաստիարակությանը վերաբերող խնդիրներ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԺՈՂՈՎ ՊՐԱՀԱՅՈՒՄ

Ապրիլի 10-13-ը Չեխիայի Եկեղեցիների հրավերով Պրահայում տեղի ունեցավ Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի տարեկան հանդիպումը:

Հայ Առաքելական Եկեղեցուց ժողովին մասնակցում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ և «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի անդամ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին և հաստատվեցին հանձնախմբի առաջիկա տարվա աշխատանքային ծրագրերը՝ եվրոպական ինտեգրման, տարածաշրջանային անվտանգության, կրոնի հասարակական դերակատարության, մարդու իրավունքների պաշտպանության, միջկրոնական երկխոսության, շրջակա միջավայրի պաշտպանության, կլիմայի փոփոխության, բիոէթիկայի վերաբերյալ:

Անդրադարձ կատարվեց 2009 թվականի հուլիսին Լիոնում կայանալիք Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի 13-րդ համագումարի աշխատանքներին և Եվրախորհրդարանի կողմից անցկացվող միջմշակութային երկխոսության թեմաներին և նույն թեմայով հրապարակվելիք «Սպիտակ թուղթ» փաստաթղթի վերաբերյալ Եկեղեցիների ուղարկած պատասխաններին:

Ժողովի ընթացքում հանդիպում տեղի ունեցավ Չեխիայի Էկումենիկ խորհրդի և Չեխական Եկեղեցիների ներկայացուցիչների հետ, որին մասնակցում էր նաև Հունգարիայում, Չեխիայում և Սլովենիայում հայոց հոգևոր հովիվ Տ. Բարսեղ վարդապետ Փիլավչյանը, ով հանուն տեղի հայ համայնքի ողջունեց ներկաներին և մասնակիցների հետ զրույցի ընթացքում ներկայացրեց իր գործունեությունը և հովվության երիտասարդական ծրագրերը:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ